

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ և ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՐԱԴԱՐԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ**

Գրադարանի ծառայություններից օգտվելու իրավունք ունեն Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (այսուհետ՝ Ինստիտուտ) պրոֆեսորադասախոսական և օժանդակ կազմը, Ինստիտուտի այլ ստորաբաժանումների հիմնական աշխատողները, ուսանողները, ասպիրանտներն ու հայցորդները:

Գրադարանից օգտվելն անվճար է:

Այլ բուհերի ներկայացուցիչները Ինստիտուտի գրադարանից կարող են օգտվել միայն Ինստիտուտի գիտաուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից թույլտվություն ստանալու դեպքում:

### **Ինչպես դառնալ ընթերցող**

Գրադարանի ընթերցող դառնալու և ընթերցողական տոմս ստանալու համար պետք է դիմել *գրադարանի տնօրինություն*՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1. անձը հաստատող փաստաթուղթ /անձնագիր/
2. մեկ լուսանկար /3 x 4 չափի/

### **\* Ուսանողները, ասպիրանտներն ու հայցորդները նաև՝**

- 1) ուսանողական տոմս
- 2) տեղեկանք ֆակուլտետի դեկանատից՝ իրենց կարգավիճակի մասին

### **\* Դասախոսները նաև՝**

- 3) տեղեկանք մարդկային ռեսուրսների կառավարման բաժնից, որտեղ պետք է նշված լինի աշխատանքային պայմանագրի տևողությունը

\* **Ծանոթություն.** Ժամանակավոր աշխատողները կամ փոխարինողները չեն կարող օգտվել գրադարանի ծառայություններից:

### **Ընթերցողական տոմսից օգտվելու կանոնները.**

- Ընթերցողական տոմս տրվում է որոշակի ժամկետով՝ կախված ընթերցողի ինստիտուտում գտնվելու կարգավիճակից:
- Հայցորդները գրադարանի ծառայություններից կարող են օգտվել միայն ընթերցասրահում՝ ժամանակավոր ընթերցողական տոմսով:
- Ընթերցողական տոմսն անվճար է:

- Եթե Ձեր ընթերցողական տոմսը կորցրել եք, անմիջապես տեղյակ պահեք *գրադարանի տնօրինությանը*:

- Խստիվ արգելվում է տոմսը տալ ուրիշին կամ օգտվել ուրիշի տոմսով:

### **Ինստիտուտի գրադարանի ընթերցողական տոմսով դուք կարող եք՝**

1) Պատվիրել գրքեր

- Ինստիտուտի գրադարանում գրանցված բոլոր ընթերցողները կարող են վերցնել **մինչև \_8\_ գիրք** :

- Գեղարվեստական գրականությունը տրվում է **10 օրով**, ուսումնամեթոդական գրքերը կամ դասագրքերը՝ **1 կիսամյակ** ժամկետով:

Հազվագյուտ, մեկ օրինակ գրականությունից, հանրագիտարաններից, ատենախոսություններից կարելի է օգտվել **միայն** ընթերցասրահում: Գրականությունը ընթերցասրահից դուրս չի տրվում:

2) Ինստիտուտի տարածքում օգտվել առցանց գրքերից և ազատ մատչելիության շտեմարաններից

3) Օգտվել գրադարանի համակարգիչներից ու անվճար ինտերնետից

4) Օգտվել գրադարանի ընթերցասրահում պահվող մասնագիտական ամսագրերից և մեկ օրինակ գրքերից

### **Ընթերցողի պարտականությունները**

Ընթերցողը կրում է նյութական պատասխանատվություն գրադարանի ֆոնդերին պատճառած վնասի համար:

Գիրքը կորցնելու կամ վնասելու դեպքում ընթերցողը **պարտավոր է** փոխհատուցել կորուստը համարժեք մասնագիտական գրականությամբ կամ Ինստիտուտին վճարել՝

մինչև 1 մամուլ ծավալ ունեցող գրքի դեպքում՝ 500 ՀՀ դրամ,

մինչև 2 մամուլ ծավալ ունեցող գրքի դեպքում՝ 1000 ՀՀ դրամ,

մինչև 3 մամուլ ծավալ ունեցող գրքի դեպքում՝ 1500 ՀՀ դրամ,

4 և ավելի ծավալ ունեցող գրքերի դեպքում՝ 5000 ՀՀ դրամ:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում ուսանողը

**պարտավոր է** հանձնել (վերադարձնել) իր մոտ եղած գրականությունը:

Սույն կանոնները խախտելու դեպքում, ընթերցողն **զրկվում է** գրադարանից օգտվելու հնարավորությունից:

Եթե ընթերցողն ազատվում կամ հեռացվում է Ինստիտուտից, նա պարտավոր է վերադարձնել իր մոտ եղած գրականությունը:

Շրջիկ թերթիկը կնքվում է **միայն** ընթերցողի մոտ եղած գրականությունը հանձնելուց հետո:

### **Գրադարանի աշխատանքային ժամերը**

Գրադարանի աշխատանքային ժամերն են առավոտյան 9.00 - 17.30-ը, ընդմիջում՝ 13.00- 13.30-ը: Ընթերցասրահը աշխատում է նույն ռեժիմով: